

Վ. Ի, վանքին արդիւնաւոր Մատենադարանապետն ու Գիււանապետը՝ Գեր. Հ. Իսահակ Վ. Սրապեան, յանձն առաւ սոյն կենսագրութիւնն ընդօրինակել եւ տպագրութեան սրբագրութիւնները հոգաց ամենայն խղճմտութեամբ: Կենսագրութիւնս հրատարակուեցաւ «Հանդէս Ամսօրեայ», Ի 1906, 205, 250, 325. եւ 1907, 7, 47, 76, 109, 169, 195 էջերուն մէջ:

Սոյն կենսագրութիւնը տպագրութեան տալու ժամանակ՝ դիտաւորութիւնս էր ինծի մատչելի վաւերագիրներով անոր ստուգութիւնը փորձի տակ դնել, եւ Սարգսի հետ՝ նաեւ ժամանակակից եւ կենակից հայ կաթողիկեայ եկեղեցական անձնաւորութեանց քանի մը հատին կեանքն հետազօտել, ի լոյս հանել ինչ որ ծածկուած կար այս մասին: Ուրախ եմ որ կարող պիտի ըլլամ առաջիկայ աշխատասիրութեան մէջ շատ նորութիւններ, շատ անձնաւորութիւններ ներկայացընել, միշտ յեցեալ վաւերագիրներու. բայց պատմական չոր իրողութենէ անդին՝ խորհրդածութիւններու կամ անձնաւորութիւններու առանց անցնելու:

Այս նպատակաւ աչքի առաջ ունեցայ շատ վաւերագիրներ եւ քանի մը տպագրութիւններ, որչափ միջավայրս կը ներէր:

1. Անտոնեան Յարգոյ Միաբանութեան Գիււանն ու Մատենադարանը մատչելի եղաւ ինձ՝ շնորհիւ Գեր. Հ. Ի. Սրապեանի: Ինչ որ այստեղէն քաղեցի, առաջիկայ գործիս մէջ կը նշանակուի՝ «Գիււ. Անտ.» եւ «Մտնդրն. Անտ.»: